ԵԴ2/32088/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 հոկտեմբերի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «ՃԱՆՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՃԱՆՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊ ընկերության անունից 04.10.2023 թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ Պատասխանողի՝ ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ճաննախագիծ ինստիտուտ ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը, ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգով 2023թ. սեպտեմբերի 22-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգով պատասխանողին «ՃԱՆՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Հայցադիմումը նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Լ. Սաղոյանին, իսկ նախագահող դատավորի աշխատակազմին է հանձնվել՝ 09.10.2023 թվականին:

Դատարանի 12.10.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին դատարան է մուտքագրվել 24.10.2023թ.-ին, իսկ նախագահող դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 25.10.2023թ.-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով ներկայացված հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՃԱՆՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ Պատասխանողի՝ ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ճաննախագիծ ինստիտուտ ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը, ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգով 2023թ. սեպտեմբերի 22-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2023/17Ն ծածկագրով գնման ընթացակարգով պատասխանողին «ՃԱՆՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2023 թվականին դեկտեմբերի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**